ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25.12.2024թ. ժ.11:00 ք. Էջմիածին

2024թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 11.00-ին ՀՀ Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում, համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ **Վաղարշապատ համայնքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության թույլատրելի և արգելված վայրերը սահմանելու որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում:**

Ելույթներ.

Կարինե Եսայան. Վաղարշապատի համայնքապետարանի իրավաբանական բաժնի պետ

Ներկայացրեց, որ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 24.4-րդ հոդվածի 3-րդ և 10-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը **համայնքի ավագանուն առաջարկվելու է որոշել.**

1. Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում մինչև 18 տարեկան անձանց կողմից անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցներով երթևեկությունը, բացառությամբ 16 տարին լրացած և «AM» ենթակարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց, թույլատրվում է

1) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասում գտնվող Զվարթնոցի այգում, համաձայն թիվ 1 հավելվածի իրավիճակային հատակագծի:

2) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արամ Մանուկյան 2-րդ թաղամասում գտնվող Արամ Մանուկյանի անվան այգում, համաձայն թիվ 2 հավելվածի իրավիճակային հատակագծի:

3) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցում գտնվող Վահան Տերյանի անվան այգում, համաձայն թիվ 3 հավելվածի իրավիճակային հատակագծի:

4) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Եղիշե Չարենցի փողոցում գտնվող Եղիշե Չարենցի անվան այգում, համաձայն թիվ 4 հավելվածի իրավիճակային հատակագծի:

5) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Անմար Կրակ հուշահամալիրի տարածքում, համաձայն թիվ 5 հավելվածի իրավիճակային հատակագծի:

2. Սահմանել Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում անհատական շարժունակության (տեղաշարժման) միջոցների երթևեկության հետևյալ արգելված վայրերը՝

1) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի համայնքապետարանի շենքի դիմաց գտնվող Ազատության պուրակում, համաձայն թիվ 6 հավելվածի իրավիճակային հատակագծի:

2) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտասի անվան հրապարակում, համաձայն թիվ 7 հավելվածի իրավիճակային հատակագծի:

3) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցի թիվ 75 հասցեում գտնվող «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի տարածքում և այգում, համաձայն թիվ 8 հավելվածի իրավիճակային հատակագծի:

<u>Դիտողություններ և առաջարկություններ</u>

Դիտողություններ և առաջարկություններ չեն հնչել:

Հանրային քննարկման արդյունքում մասնակիցները որոշեցին որոշման նախագիծը ներկայացնել համայնքի ավագանու հաստատման:

Հանրային քննարկման նախաձեռնող՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Վարող և զեկուցող՝ **Ա Եսայան**

Արձանագրող՝ **Մ Պողոսյան**